

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«12» *Մարտ* 2014 թ. թիվ *58* նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
(նոր խմբագրությամբ)

Երևան 2014 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տարակարգերը, դրանց տեղակալման, բացառիկ դեպքերում պաշտոնների նշանակման սկզբունքները:
2. Կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի ընդունումը, կազմի և Կենտրոնի միջև աշխատանքային հարաբերությունները իրականացվում են ժամկետային պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը (բացառությամբ աշխատանքային պայմանագրի վերակնքման, հատուկ տարակարգերի զբաղեցման, բացառիկ դեպքերում պաշտոնների նշանակման դեպքերի):

II. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐ

3. Կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝
 - դասախոս
 - դոցենտ
 - պրոֆեսոր
4. Կենտրոնի դասախոսի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի, գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ բացառիկ դեպքերում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճան:
5. Կենտրոնի դոցենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան և (կամ դոցենտի գիտական կոչում) բուհում դասախոսական աշխատանքի առնվազն 3 տարվա փորձ:
6. Կենտրոնի պրոֆեսորի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր, ունեն դոկտորի գիտական աստիճան (կամ պրոֆեսորի գիտական կոչում) և բուհում դասախոսական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ:
7. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանված տարակարգերից զատ՝ Կենտրոնում կարող են գործել նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր (ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին)՝
 - 7.1. խորհրդատու պրոֆեսոր կամ դոցենտ՝ ՀՀ կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից հրավիրված և կենտրոնում մասնակի կամ լրիվ դրույքով համապատասխան տարակարգում ժամանակավորապես ձևակերպված մասնագետ.
 - 7.2. համատեղող պրոֆեսոր, դոցենտ, դասախոս՝ բուհի կամ այլ կրթական հաստատության, ինչպես նաև հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների՝ համապատասխան տարակարգով և մինչև 0.5

դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որը համալրում է պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքները:

8. Կենտրոնում վարչական աշխատանքի անցած դասախոսները համատեղության կարգով կարող են մինչև 0.5 դրույք (լսարանային՝ ոչ ավել, քան 0,25) պահպանել իրենց պրոֆեսորադասախոսական տարակարգը: Լիազորությունների ավարտից հետո նրանք կենտրոնում ապահովվում են գրասախոսական համապատասխան պաշտոնով:

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

9. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝

- հավակնորդի որակավորման (ակադեմիական) աստիճանը, գիտական աստիճանը և գիտական կոչումը,
- դասախոսական աշխատանքի փորձը,
- ուսումնական, հետազոտական, մեթոդական գործունեության ցուցանիշները,
- ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը:

10. Ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի՝ սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական գործունեության ցուցանիշները, որոնք ձևավորվում են ըստ հետևյալ աշխատանքների.

ա) Պրոֆեսորի համար՝

- դասախոսությունների վարում.
- գիտամեթոդական սեմինարների կազմակերպում.
- մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների ղեկավարում.
- մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր ծրագրերի ու դասընթացների մշակում.
- գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում.
- մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին.
- ամբիոնում հետազոտական ծրագրերի, խմբերի, լաբորատորիաների աշխատանքների մասնակցություն և (կամ ղեկավարում).
- մասնակցություն կենտրոնի և արտասահմանյան գիտակազմակերպական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների.
- խորհրդատվական գործունեություն:

բ) Դոցենտի համար՝

- դասախոսությունների վարում.
- գիտամեթոդական սեմինարների կազմակերպում.

- մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների ղեկավարում.
- գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրապարակում.
- հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում.
- մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին.
- մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

գ) Դասախոսի համար՝

- դասախոսությունների վարում.
- գործնական պարապմունքների վարում.
- մագիստրոսական թեզերի ղեկավարում. կուրսային աշխատանքների ղեկավարում.
- մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական աշխատանքներին:

IV. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է՝

- ա) թափուր պաշտոնների տեղակալման կարգով.
- բ) բացառիկ դեպքերում՝ պաշտոնների նշանակման կարգով.
- գ) պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու կարգով:

12. Բացառիկ դեպքերում պաշտոնների նշանակման կարգով պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրման ժամանակ համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.

ա) պրոֆեսորի տարակարգում՝

- Բուհում երկարատև արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած անձինք, ովքեր ունեն թեկնածուի գիտական աստիճան ու դոցենտի կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին,
- առանց մանկավարժական ստաժի սահմանափակման՝ Կենտրոն հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, որոնք ունեն դոկտորի գիտական աստիճան ու դոցենտի կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին:

բ) դոցենտի տարակարգում՝

- Կենտրոնում երկարամյա արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած դասախոսները, որոնք չունեն գիտական աստիճան, բայց որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտին ներկայացվող որակական չափանիշներին:

13. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը հատուկ տարակարգերի միջոցով համալրելու դեպքում պաշտոնների կարող են հավակնել ՀՀ և արտասահմանյան բուհերի, հետազոտական և գիտաարտադրական և այլ կազմակերպությունների աշխատակիցները, որոնք ունեն համապատասխան մասնագիտական որակավորում:
14. Բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորումը կարող է իրականացվել մրցութային պայմանագրային եղանակով կամ առանց մրցույթի՝ որոշակի ժամկետով աշխատանքային (կամ քաղիրավական) պայմանագրերի կնքման եղանակներով:
15. Մրցութային պայմանագրային եղանակով պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորումն իրականացվում է թափուր պաշտոնների տեղակալման կարգով: Այդ դեպքերում հավակնորդների գործերի քննարկման արդյունքներով կազմակերպվում է մրցույթ, մրցույթում հաղթած հավակնորդների հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով: Հավակնորդները հրամանագրվում են համապատասխան պաշտոններում:
16. Առանց մրցույթի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրումը կարող է իրականացվել հատուկ տարակարգեր զբաղեցնելու կամ բացառիկ դեպքերում պաշտոնների նշանակման կարգով: Այդ դեպքերում հավակնորդների հետ կնքվում են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր, և նրանք հրամանագրվում են համապատասխան պաշտոններում մինչև 1 տարի ժամկետով:
17. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման գործընթացում պաշտոնի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ցանկը, ներկայացման ժամկետը, հավակնորդների գործերի քննարկման ընթացակարգը, մրցույթի անցկացումը, աշխատանքային պայմանագրի կնքումը և պաշտոնում հրամանագրումը սահմանվում են համապատասխան կարգերով:
18. Առկա պաշտոնների լուծարման (ուսումնական ծանրաբեռնվածության զգալի նվազման, ֆակուլտետի, ամբիոնի լուծարման կամ այլ պատճառներով) դեպքում պրոֆեսորադասախոսական պաշտոն զբաղեցնող անձին ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է գրավոր ծանուցում:

V. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Պրոֆեսորադասախոսական անձնակազմում պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել՝

- ուսումնական ծրագրերի փոփոխման կամ ուսանողների թվաքանակի կրճատման դեպքում.
- պաշտոնը զբաղեցնող անձի մասնագիտական գիտելիքների անբավարարության պատճառով ամբիոնի եզրակացության հիման վրա.
- ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: